ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.09.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/126

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16123-18 գրությամբ «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 04.09.2018թ. գրության հիման վրա, 06.09.2018թ. «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 04.09.2018թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցին՝ «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ին 06.08.2018թ. ուղարկվել է թիվ 8 և 22 չափաբաժիններով պայմանագիր կնքելու ծանուցում՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով ստորագրել գնման պայմանագիրը և ներկայացնել պայմանագրի գնի տաս տոկոսի չափով պայմանագրի կատարման ապահովում:

Սակայն 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրվել և պատվիրատուին չի ներկայացվել պայմանագիրը և պայմանագրի կատարման ապահովումը:

«ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ին 28.08.2018թ. կատարվել է հարցում պայմանագիրը ստանալու մասին տեղեկատվության մասին, մասնակիցը էլեկտրոնային եղանակով հաստատել է 06.08.2018թ. պայմանագրի ծանուցումը ստանալու փաստը:

29.08.2018թ. մասնակիցը գրությամբ ներկայացրել է թիվ 8 և 22 չափաբաժիններով գնման պայմանագիր և պայմանագրի գնի տաս տոկոսի չափով պայմանագրի կատարման ապահովում:

Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով:»:

ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Պատվիրատուի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 06.09.2018թ. դիմել է «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16123-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ կարծիք չի ներկայացվել:

«ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն Ընկերության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

4. ՍՑ-ԷՍ-2018/126 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16123-18 գրությունը, ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 04.09.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 02.08.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 03.09.2018թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունները.

«Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02 գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 02.08.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ 1-ից 39-րդ չափաբաժինների մասով:

«Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 06.08.2018թ. «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ին գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02 ծածկագրով ընթացակարգի թիվ 8 և 22 չափաբաժինների մասով Ձեր կազմակերպությունը ճանաչվել է հաղթող մասնակից:

Սույն գրությունը ստանալուց հետո, Ձեզ առաջարկվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում օրենքով նախատեսված կարգով ստորագրել գնման պայմանագիրը և «Գնումների մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն ներկայացնել պայմանագրի գնի 10 տոկոսի չափով պայմանագրի կատարման ապահովում:»:

«Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 28.08.2018թ. գրությամբ դիմել է «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ին՝ խնդրելով հաստատել թիվ 8 և 22 չափաբաժիններով գնման պայմանագրի նախագծի, պայմանագրի կատարման ապահովման ծանուցման ստացման փաստը և նշված տեղեկությունը ուղղարկել paylak.gnumner.hakobyan@mail.ru էլ. փոստի հասցեին:

28.08.2018թ. «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ն paylak.gnumner.hakobyan@mail.ru էլ. փոստի հասցեին ուղարկել է նամակ, որով հաստատել է, որ 06.08.2018թ. ուղարկված ծանուցումը ստացել է:

Հանձնաժողովը 03.09.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ 06.08.2018թ. ուղարկվել է թիվ 8 և 22 չափաբաժիններով պայմանագիր կնքելու ծանուցում՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ստորագրել գնման պայմանագիրը և ներկայացնել պայմանագրի գնի տաս տոկոսի չափով պայմանագրի կատաարման ապահովում: Սակայն 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրվել և Պատվիրատուին չի ներկայացվել պայմանագիրը և պայմանագրի կատաարման ապահովումը: 28.08.2018թ. «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ին կատարվել է հարցում պայմանագիրը ստանալու մասին տեղեկատվության մասին, մասնակիցը էլեկտրոնային եղանակով հաստատել է 06.08.2018թ. պայմանագրի ծանուցումը ստանալու փաստը: 29.08.2018 մասնակիցը գրությամբ ներկայացրել է թիվ 8 և 22 չափաբաժիններով գնման պայմանագիր և պայմանագրի գնի տաս տոկոսի չափով պայմանագրի կատաարման ապահովում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ,

քան նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

- 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումն, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

«Արտաշատ քաղաքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված ԱՐՏՔՅՄ-ԳՀԱՊՁԲ-18/02 գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝

- 8.2 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 7.26 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան նույն հրավերի 1-ին մասի 7.26 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

- 8.4 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է՝ 20.08.2018թ. չի ստորագրել և Պատվիրատուին չի ներկայացրել պայմանագիրը և պայմանագրի կատարման ապահովումը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելով և պայմանագրի ապահովումը Պատվիրատուին չներկայացնելով, խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջը, ինչի արդյունքում վերջինս զրկվել է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության 06.09.2018թ. թիվ 01.1/26-3/16123-18 գրությամբ «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ՍԱՄԻԿ ԵՎ ՎԱՐԴԱՆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**